Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ Արմավիրի մարզպետարանի 2019 թվականի առաջին կիսամյակի ընթացքում
կատարած հիմնական աշխատանքների վերաբերյալ

Մարզպետարանի գործունեության կազմակերպման ընդհանուր հարցեր

1. Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են աշխատանքներ փաստաթղթաշրջանառության արդյունավետ ապահովման, մարզպետարանի կարիքների համար 2019թ. պետական բյուջեով նախատեսված և համապատասխան ծախսային ծրագրերի իրականացման նպատակով գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանացանկում ընդգրկված ապրանքանյութական արժեքների ձեռքբերման, հաշվառման, մարզպետարանին ամրացված անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների պաշտպանության և այդ գույքի արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցառումների, մարզպետարանի վարչական շենքի կոմունալ ծառայությունների տեխնիկական, տրանսպորտային սպասարկման, ինչպես փաստաթղթերի արխիվացման ուղղությամբ:
2. Մարզպետարան մուտքագրվել է 11855 և առաքվել 3892 փաստաթուղթ:
3. Նախապատրաստվել են մարզպետի կողմից մարզպետարանում հրավիրված մարզի խորհրդի 2 նիստերի, 2 ընդլայնված խորհրդակցությունների և 1 զորակոչային հանձնաժողովի նիստի կազմակերպման ու արձանագրման աշխատանքները:
4. Մարզպետի կողմից ընդունվել և արձակվել են 210 որոշումներ և 94 կարգադրություններ, իսկ մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատարի կողմից արձակվել են 234 հրամաններ:
5. Մարզպետարանում մուտքագրվել են քաղաքացիների 1388 նամակներ, որոնք ինչպես մարզպետարանի, այնպես էլ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ուղարկված պատկան մարմինների կողմից օրենսդրությանը համապատասխան ստացել են իրենց հնարավոր լուծումները: Արդյունքում, 1388 նամակներից դրական արդյունքով կամ պարզաբանմամբ համապատասխան լուծումներ են ստացել 1325-ը, իսկ 63-ը՝ ընթացքի մեջ է:
6. Մարզպետի մոտ յուրաքանչյուր ամսվա հինգշաբթի օրերին կազմակերպված ընդունելություններին մասնակցել են ընդհանուր թվով 123 քաղաքացիներ, որոնց կողմից բարձրացված հարցերը օրենսդրությանը համապատասխան նույնպես ստացել են իրենց հնարավոր լուծումները: Արդյունքում, վերը նշված 123 հարցադրումներից 59-ին տրվել է դրական լուծում, 3-ը մերժվել է, իսկ 55-ին օրենսդրությանը համապատասխան տրվել է պարզաբանում, 6-ը՝ ընթացքի մեջ է:
7. Համապատասխան աշխատանքներ են կատարվել նաև ծառայողական ավտոմեքենաների թիվը 4-ով կրճատելու գործընթացը սահմանված կարգով ապահովելու ուղղությամբ: Այդ մեքենաները գտնվում են վաճառքի կազմակերպման գործընթացում: Գործընթացի իրականացման արդյունքում կատարված հաշվարկներով նշված ավտոմեքենաների միայն սպասարկման մասով տարեկան խնայողությունը կկազմի շուրջ 2250.0 հազ. ՀՀ դրամ գումար:
8. Իրականացվել են մարզպետարանի թվով 13 քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կազմակերպման աշխատանքները՝ համաձայն հաստատված պլան-գրաֆիկի: ՀՀ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում վերապատրաստվել է 5 քաղաքացիական ծառայող:
9. ՀՀ կառավարության 19.07.2018թ. N 814-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան իրականացվել է 6 ծառայողական քննություն, որի արդյունքում կարգապահական պատասխանա-տվության է ենթակվել 4 քաղաքացիական ծառայող, դադարեցվել է 2 ծառայողական քննություն:
10. ՀՀ կառավարության 10.07.2018թ. N 792-Ն որոշման համաձայն՝ քաղաքացիական ծառայության ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու համար հայտարարվել է 17 մրցույթ՝ 10 պաշտոնի համար, արդյունքում ժամկետային աշխատանքային պայմանագրեր են կնքվել 9 անձի հետ: Կնքվել է 2 անորոշ և լուծվել 2 անորոշ, 4 ժամկետային աշխատանքային պայմանագիր:
11. Մարզային ենթակայության 23 ՊՈԱԿ-ների տնօրենների հետ կնքվել են ժամկետային աշխատանքային պայմանագրեր, 21 անձ նշանակվել է տնօրենի պաշտոնակատար, կազմվել և վարվել են համապատասխան անձնական գործեր, 1 պայմանագիր լուծվել է գործողության ժամկետն ավարտվելու, 2 պայմանագիր՝ անձնական դիմումի համաձայն, 3-ը՝ 65 տարին լրանալու կապակցությամբ:
12. Իրավական ոլորտում աջակցություն է ցուցաբերվել մարզպետարան դիմած թվով 61 քաղաքացիներին, որոնց կողմից ներկայացված դիմումներում անդրադարձել են բնակարանային, հողային խնդիրներին,

դրամական աջակցության, անհուսալի դասակարգված վարկերի մարման կարգի, ինչպես նաև խախտված իրավունքների վերականգնման հարցերին:

13. Դատական մարմիններում են գտնվել թվով 3 դատական գործ: Դրանցով բողոքարկվել են մարզպետի կողմից ընդունված որոշումներ, որոնցով էլ կայացվել են համապատասխան վճիռներ՝ մերժելով ներկայացված հայցերը և իրավաչափ գնահատելով մարզպետի կողմից ընդունված վերոնշյալ բողոքարկվող որոշումները: Նշված գործերը վերադասության կարգով բողոքարկվել են:
14. Մարզպետարանում կենտրոնացված գործավարության ճշգրիտ վարման և փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպման նպատակով տարեսկզբից ներդրվել և գործում է «Mulberry-2» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ:
15. Նոր համակարգին միանալու հնարավորություն չունեցող 17 համակարգիչ փոխարինվել է նորերով, 1-ական նոր համակարգիչ տրամադրվել են 3 ՍԱՏԳ-ներին:

Ֆինանսական բնագավառ

1. Կազմակերպվել և իրականացվել են մարզպետարանի և ենթակայության թվով 111 ՊՈԱԿ-ների և 6 ՊՓԲԸ-ների 2019թ. պահպանման ծախսերի նախահաշիվների և հաստիքացուցակների կազմման և հաստատման, տարեֆիկացիոն մատյանների ու դրանցում կատարված փոփոխությունների ուսումնասիրության և վերլուծության աշխատանքները: Կազմվել են մարզային ենթակայության ՊՈԱԿ-ների հետ 2019թ. ուսուցման գծով պետական պատվերի սուբսիդավորման հաշվարկները:
2. Մշակվել են մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի 2020-2022թթ. ՄԺԾԾ-ի բյուջետային հայտերը: Իրականացվել է մարզպետարանի և մարզպետարանի ենթակայության 111 ՊՈԱԿ-ների կատարված բյուջետային ծախսերի և պարտքերի մասին հաշվետվությունների ընդունում, ամփոփում և ներկայացում ՀՀ ֆինանսների նախարարություն, մարզպետարանի ենթակայության 6 առողջապահական ՊՓԲԸ-ներից ստացված ֆինանսատնտեսագիտական մոնիտորինգի վերաբերյալ ցուցանիշների ճշգրտման, ամփոփման և ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե ներկայացման աշխատանքները:
3. Իրականացվել են մարզպետարանի կարիքների համար 2019թ. գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման ընթացակարգերը: Ցուցաբերվել է մեթոդական և խորհրդատվական օգնություն համայնքներին՝ 2019թ. բյուջեների փոփոխության գործընթացում: Իրականացվել են մարզի համայնքների 2019թ. հաստատված բյուջեների գործող օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ ուսումնասիրություններ, ինչպես նաև 2019թ. ճշտված բյուջեների ամփոփում և ներկայացում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (այսուհետ՝ ՀՀ ՏԿԵՆ):
4. Կազմվել է 2019թ. պետական բյուջեի միջոցների հաշվին մարզպետարանի կարիքների համար անհրաժեշտ աշխատանքների, ծառայությունների, ապրանքների անվանացանկերը: Մարզի 97 համայնքներից ընդունվել է բյուջեների եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի վերաբերյալ ամսական և եռամսյակային հաշվետվություններ, ամփոփվել և ներկայացվել վերաքննիչ պալատ, ՀՀ ՏԿԵՆ: Կատարված աշխատանքների արդյունքում համայնքների տարեկան սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշներում արձանագրվել է աճ 3.3%, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, այդ թվում՝ գույքահարկի գծով՝ 6.3%, հողի հարկի գծով՝ 4.6%, տեղական տուրքերի գծով՝ 3.6%, վարձակալության վճարների գծով՝ 4.7% աճ:
5. Կազմակերպվել և իրականացվել է մարզի համայնքների բյուջեների եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների հաջորդ տարվա բյուջեների եկամուտների կորուստները հաշվարկելու համար պահանջվող տեղեկատվության հավաքագրման, ստուգման և ըստ համայնքների ամփոփման աշխատանքները: Ընդունվել և ամփոփվել է պետական բյուջեից մարզի համայնքների բյուջեներին դոտացիայի հատկացման ընթացքի, համայնքների բյուջեներին ամրացված եկամուտների կատարման ընթացքի և բյուջեներով կատարվող ծախսերի, ընթացիկ տարվա աշխատավարձերի, ծախսերի կատարման մասին տեղեկատվությունը: Իրականացվել է մարզպետարանի հաշվապահական հաշվառման, ֆինանսական, հարկային, սոցիալական ապահովության պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվությունների ներակայացում համապատասխան մարմիններին: Պետական գույքի կառավարման կոմիտե են ներկայացվել մարզպետարանի ենթակայության ՊՈԱԿ-ների և բաժնետիրական ընկերությունների հիմնական միջոցների շարժի վերաբերյալ տեղեկատվությունները:

Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառ

1. Կազմակերպվել և համակարգվել են 2019թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքներում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները: Մարզում հաշվառվել է 52072 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, մանր եղջերավոր՝ 102536, խոզեր՝ 25920, 1064038 թռչուններ: Գուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի շրջանակներում իրականացվել են պլանով նախատեսված հակահամաճարակային կանխարգելիչ բոլոր միջոցառումները:
2. Համակարգվել է մարզում գործող «Ոռոգում-Ջրառ» ՓԲԸ-ի մասնաճյուղերի և թվով 3 ՋՕԸ-երի գործունեությունը: 240.18 կմ միջտնտեսային, 4705.2 ներտնտեսային ցանցերը, 384 խորքային հորերը և 54 պոմպակայանները պատրաստ են եղել ջրամատակարարմանը, որը սկսվել է 2019թ. ապրիլի 20-ից:
3. Ուսումնասիրվել և գույքագրվել են մարզի տարածքով հոսող Արաքս, Մեծամոր և Քասախ գետերի, ինչպես նաև հեղեղատարների հուների մաքրման և ափապատնեշների ամրացման նպատակով իրականացվելիք աշխատանքները և ներկայացվել ՀՀ կառավարություն:
4. 2019թ. նախատեսվել է մարզում մաքրել 43,5կմ երկարությամբ բաց դրենաժային համակարգ՝ 7 համայնքներում: Ներկայումս մաքրման աշխատանքներ են իրականացվում Գայ, Զարթոնք համայնքներում, մաքրվել է շուրջ 8 կմ երկարությամբ հատված, աշխատանքները շարունակվում են:
5. Ուսումնասիրվել և համակարգվել են համայնքներում գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման, գարնանացանի իրականացման աշխատանքները:
6. ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով մարզի հողօգտագործողներին որպես աջակցություն տրամադրվել են՝ 28.2տոննա գարնանացան գարու, 0.94 տոննա առվույտի սերմացուներ, որոնք բաշխվել են համապատասխանաբար 11 համայնքների 117 շահառուների, արդյունքում, 171.02հա-ի վրա կատարվել են ցանքսի աշխատանքներ:
7. Ուսումնասիրվել են բնածին աղետների՝ կարկտահարության հասցրած վնասները, որոնք ամփոփվել են ըստ համայնքների և մշակաբույսերի և կներկայացվեն ՀՀ ՏԿԵՆ և ՀՀ ԱԻՆ:
8. Իրականացվել են մարզում տեղակայված 207 հակակարկտային կայանների ապակոնսերվացման, լիցքավորման և առկա թերությունների վերացման աշխատանքները:
9. 2019թ. փետրվար ամսին կազմվել է Արմավիրի մարզի սանիտարական մաքրման սխեման:
10. Մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կազմում մարզպետարանի համապատասխան աշխատակիցների կողմից մարզի համայնքներում ընդերքօգտագործման և շահագործման կանոնների պահպանման և փաստաթղթերի օրինականության պահպանման ուղղությամբ կատարվել են մշտական այցելություններ և ուսումնասիրություններ:
11. Հավաքագրվել և ըստ համայնքների ամփոփվել են համայնքներում առկա 1635.74 հա կաթիլային ոռոգվող, 176.4հա կարկտապաշտպան ցանցապատ հողատարածությունները, ինչպես նաև 814.6 հա ջերմոցային տնտեսությունների տարածությունները: Շուրջ 449 գյուղացիական տնտեսություններին պատկանող սառնարանային տնտեսությունների կարողությունը կազմել է 21100 տոննա: Վերլուծության արդյունքում, նախորդ տարվա ցուցանիշների համեմատությամբ արձանագրվել է աճ, որոնք գրեթե կրկնապատկվել են:
12. Պիստակի այգիներ են հիմնվել Կողբավան և Արտամետ համայնքներում՝ շուրջ 40հա-ի վրա:
13. «Հայաստան Ծառատունկ» ծրագրի շրջանակներում մարզի 20 համայնքներում տնկվել են 5500 գեղատեսիլ ծառեր և թփեր:

Հողաշինության և հողօգտագործման բնագավառ

1. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների հաստատման նպատակով, սահմանված կարգով ՀՀ կառավարություն են ներկայացվել մարզի թվով 15 համայնքներում հողերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ հողաշինական գործեր: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունները ներկայացվել են թվով 7 համայնքների ղեկավարների՝ առաջարկելով ընդունել ավագանու համապատասխան որոշումներ և կատարել պետական գրանցումներ: Մնացած հողաշինարարական փաթեթներն ուղարկվել են համայնքներ՝ լրամշակման:
2. ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովին միջնորդություն է ներկայացվել մարզի թվով 4 համայնքում հայտնաբերված անճշտությունների ուղղման նպատակով: Հողաշինական գործերի վերաբերյալ ստացված դրական եզրակացությունները ներկայացվել են

համայնքների ղեկավարներին՝ առաջարկելով պետական գրանցում կատարել: Մյասնիկյան համայնքի հողաշինարարական գործը գտնվում է համաձայնեցման փուլում:

3. Վերահսկողություն է իրականացվել մարզի համայնքներում հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն կատարելու հետևանքով կատարված աշխատանքների նկատմամբ, որի արդյունքում հավաքագրվել և ՀՀ ՏԿԵՆ են ներկայացվել համապատասխան տվյալներ:
4. Իրականացվել են համայնքների վարչական սահմաններում գտնվող հողամասերի աճուրդային վաճառքի և վարձակալության տրամադրման վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության, ամփոփման և ՀՀ ՏԿԵՆ ներկայացման աշխատաքները:
5. ՀՀ կառավարության 17.09.2009թ. N 1066-Ն որոշմամբ և մարզպետի 12.11.2009թ. N 151 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կազմում կազմակերպված ուսումնասիրությունների արդյունքում մարզի թվով 30 համայնքի համար տրվել է եզրակացություն՝ բարձրարժեք հողատեսքերը ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու վերաբերյալ՝ ընդամենը՝ 344 հա:
6. Համապատասխան միջնորդություն է ներկայացվել ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն՝ Արաքս (Էջմ.) համայնքում պետական սեփականություն հանդիսացող հողատարածքները վարձակալության տրամադրելու վերաբերյալ:
7. Օրենքով սահմանված կարգով օրենսդրական փոփոխության միջնորդություն է ներկայացվել Արտիմետ, Աղավնատուն և Արգավանդ համայնքներում ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Արդյունքում, Արտիմետ համայնքում 1.06հա պետական սեփականություն հանդիսացող բնակավայրի հողատարածքը փոխանցվել է համայնքին՝ համայնքի բնակիչների համար բնակելի տներ կառուցելու նպատակով: Մնացած միջնորդությունները գտնվում են համաձայնեցման փուլում:
8. Մասնակցություն է ցուցաբերվել ՀՀ ՏԿԵՆ-ում «ՀՀ հողերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի) գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները, սահմանների կոորդինատներն ու տարածա-գնահատման գոտիականության քարտեզները, անշարժ գույքի հարկման նպատակով շուկայական գնահատման մեթոդաբանությունը, բազային արժեքները, շինությունների քանակական և որակական բնութագրիչների գործակիցների մեծությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթի քննարկմանը, որի վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ:
9. Մարզպետարանը համագործակցում է Արմավիրի մարզում տեղակայված ռուսական N զորամասի հետ՝ սահմանի երկայնքով հողային աշխատանքներին մասնակցություն ցուցաբերելու ուղղությամբ:

Քաղաքաշինության բնագավառ

1. ՀՀ պետական բյուջեով նախատեսված «Կրթական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով 125,360.0 հազ. դրամով նախատեսված է իրականացնել Թաիրովի միջն. դպրոցի վերանորոգման աշխատանքները: 2017թ. կատարվել է 29,400.7 հազ. դրամի, 2018թ.՝ 62,077.78 հազ. դրամի աշխատանքներ, իսկ մնացած՝ 63,282.22 հազ. դրամի աշխատանքները տեղափոխվել են 2019 թվական, ներկայումս կատարվել են 45,046.744 հազ. դրամի աշխատանքներ: Թաիրովի միջն. դպրոցի վերանորոգման աշխատանքների կատարման համար 16.05.2017թ. կնքվել է պայմանագիր՝ 154,800.0 հազ. դրամ արժեքով:
2. Ուսումնասիրվել և ճշգրտվել է մարզում առկա վթարային օբյեկտների, կիսակառույցների, ինչպես նաև առաջնահերթ հիմնանորոգման կարիք ունեցող օբյեկտների ցանկը և ծրագրերում ներառելու նպատակով առաջարկություն է ներկայացվել համապատասխան մարմիններին:
3. Վերահսկողություն է իրականացվել համայնքների քաղաքաշինության գործունեության, այդ թվում նաև ինքնակամ շինարարությունների կանխման, կասեցման և դրա հետևանքների վերացման ուղղությամբ: Արդյունքում, 2 տնտեսվարող տուգանվել է, 9-ին տրվել է ծանուցում ինքնակամ գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ:
4. Ուսումնասիրվել և հաշվարկվել են մարզի թվով 4 համայնքներում (Դալարիկ, Բամբակաշատ, Արազափ և Մրգաշատ) 2019թ. ընթացքում արտակարգ իրավիճակների՝ ուժեղ քամու, պտտահողմի, կարկուտի հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող շենք-շինություններին պատճառված վնասները և ներկայացվել ՀՀ ՏԿԵՆ և ՀՀ ԱԻՆ:
5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատման 43 փաթեթ (հողահատկացում, ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրում, ճարտարապետահատակագծային

նախագծերի փաստաթղթերի համաձայնեցում) համաձայնեցվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հետ, թվով 42 փաթեթ՝ մարզպետարանի հետ:

6. Թվով 4 դպրոցներում անցկացվել և հիմնանորոգվել են ջեռուցման համակարգեր (Թաիրովի, Երասխահունի, Արևադաշտի և Շահումյանի միջնակարգ դպրոցներ):
7. ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ՝ մարզպետարան-համայնք-մասնավոր համագործակցության արդյունքում Արմավիր քաղաքում տեղակայված նախկին հակահամաճարակային կայանի շենքը կվերանորոգվի և անհատույց կտրամադրվի 26 անօթևան ընտանիքների:
8. Իրականացման ընթացքի մեջ են մարզում առաջնահերթ լուծում պահանջող 18 ծրագրեր՝ ուղղված համայնքներում խմելու ջրագծերի ներհամայնքային ցանցերի, կոյուղագծերի ներքին ցանցերի և ոռոգման ներքին ցանցերի վերանորոգումը: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 452.8 մլն դրամ, որից պետական բյուջեի միջոցներից 381.14 մլն ՀՀ դրամ և համայնքների բյուջեներից՝ 71.66 մլն դրամ: Մասնակցություն է ցուցաբերվել մարզում առաջնահերթ լուծում պահանջող ծրագրերի իրականացված աշխատանքների ավարտական, հանձնման-ընդունման աշխատանքներին: Առատաշեն համայնքում շահագործման է հանձնվել խմելու ջրի պոմպակայանը և խողովակաշարը:
9. Ուսումնասիրվել և հաշվառվել են մարզի համայնքների ղեկավարների կողմից տրամադրված թվով 225 շինթույլտվություններ, թվով 6 ավարտական (շահագործման) ակտեր և 2 քանդման թույլտվություն:
10. Համակարգվել է մարզի համայնքների կողմից ներկայացրած թվով 37 սուբվենցիոն ծրագրերի, առաջնահերթ լուծում պահանջող ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման և ուսումնասիրման գործընթացը:
11. Ուսումնասիրվել, գնահատվել և ներկայացվել է մարզի բնակավայրերի խմելու ջրամատակարարման բնագավառում առաջնահերթ լուծում պահանջող ևս 21 ծրագրեր:

Տրանսպորի և ճանապարհաշինության բնագավառ

1. 2019թ. պետական բյուջեից մարզային նշանակության ճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանման և շահագործմանը հատկացվել է 62.415 մլն դրամ, որից 8.9 մլն դրամը նախատեսված է 80.7կմ ձմեռային պահպանության համար (վճարվել է 4.4մլն.դրամ), 53.5մլն դրամը՝ 46.6կմ-ի ընթացիկ պահպանման ու շահագործման համար (վճարվել է 12.8մլն.դրամ):
2. Համաշխարհային բանկի (կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրով) ֆինանսավորմամբ 555.1 մլն.դրամ արժողությամբ սկսվել են Տ-3-51 «Մ5-Սարդարապատ-Նոր Արմավիր-Տ-352» 6.14կմ երկարությամբ մարզային նշանակության ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:
3. «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ից ձեռք բերված շուրջ 2400մ^3 աղացած ասֆալտով մարզի թվով 17 համայնքներում իրականացվել են փոսալցման և հարթեցման աշխատանքներ:
4. ՀՀ ՏԿԵՆ առաջարկություն է ներկայացվել թվով 8 ճանապարհների հիմնանորոգումը, այդ թվում՝ Տ-3-21 «Մ-5-Երվանդաշատ-Բագարան» 6կմ երկարությամբ ճանապարհահատվածը՝ Համաշխարհային բանկի կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրերում ընդգրկելու համար:

Բնակարանային կոմունալ և աղբահանության բնագավառ

1. Բնակավայրերի մաքրման և աղբահեռացման ուղղությամբ ստուգայցեր են կատարվել համայնքներ և տեղ գտած թերությունների վերացման նպատակով առաջարկություններ են ներկայացվել համայնքների ղեկավարներին:
2. «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործառույթների պահանջների պարտադիր կատարման նպատակով համակարգվել է համայնքների կողմից ստուգումների և հսկողության արդյունքների իրականացումը և ամփոփ տեղեկատվության ապահովումը: Մարզում առկա առևտրի և սպասարկման օբյեկտների թիվը 1418 է, որից առևտրի օբյեկտ՝ 1073, հանրային սննդի օբյեկտ՝ 153, կենցաղ-սպասարկման օբյեկտ՝ 192:
3. Առաջարկվել է համայնքների ղեկավարներին հետամուտ լինել տնտեսվարող սուբյեկտներին՝ ապահովելով ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում տեղակայված հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում առկա հասարակական զուգարանների նկատմամբ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարի 16.04.2009թ. N 06-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոններով և նորմերով ներկայացված պահանջների կատարման ընթացքին: Արմավիրի մարզի ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում տեղակայված 48 ԱԳԼՃԿ-ներում առկա

հասարակական զուգարանների սանիտարական վիճակի բարելավման ուղղությամբ կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում հարուցվել է վարչական վարույթ 40-ի նկատմամբ, կիրառվել են վարչական տույժեր:

4. «Մաքուր Հայաստան» ծրագրով նախատեսված մարզում կազմակերպվել են համապետական երկու շաբաթօրյակներ: Մարզի համայնքների սանիտարական մաքրման և աղբահանության վիճակի վերահսկման նպատակով պարբերաբար ստուգայցեր են կատարվել մարզի համայնքներ: Համայնքներից ընդունվել, ամփոփվել և ՀՀ ՏԿԵՆ են ներկայացվել աղբահանության գծով ամսական հավաքագրված գումարների և կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունները: Մարզում առկա է 46 օրինական աղբավայր, պլանավորված եկամուտը աղբահանությունից 334.3 մլն դրամ է, որից հավաքագրվել է շուրջ 115.57 մլն դրամ, առաջարկվել համայնքների ղեկավարներին խստացնել հսկողությունը՝ աղբահանության վարձավճարների հավաքագրման և իրավաբանական անձանց հետ պայմանագրերի կնքման ուղղությամբ:
5. Առաջարկվել է համայնքների ղեկավարներին գերեզմանատեղերի անվճար և վճարովի հիմունքներով տրամադրման գործընթացի, բարեկարգման, պահպանման ու շահագործման կանոնները պահպանելու նկատմամբ՝ սահմանել խիստ հսկողություն:

Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառ

1. **Կրթություն.** Կազմակերպվել է մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների 2019-2020, 2020-2021 և 2021-2022 ուսումնական տարիների նախնական կոմպլեկտավորումների կազմումը և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ներկայացնելը:
2. Կազմակերպվել է նախադպրոցական տարիքի երեխաների հաշվառումը: Կազմակերպվել է մարզի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում տարբեր կազմակերպությունների կողմից իրականացված թվով 6 ստուգումների քննարկումը, արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը տրամադրվել է համապատասխան կազմակերպություններին:
3. Կազմակերպվել են մարզային ենթակայության պետական կրթական հաստատությունները մանկավարժական կադրերով ապահովելու աշխատանքները, որի արդյունքում շուրջ 50 մանկավարժական հաստիք համալրվել է, կազմակերպվել է ամիսը 2 անգամ մարզի ուսումնական հաստատություններում առկա թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվության հավաքումը, ամփոփումը և ՀՀ ՏԿԵՆ ներկայացնելը:
4. Կազմակերպվել և անցկացվել են առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ.
   - Դպրոցականների 2018-2019 ուստարվա օլիմպիադաների տարածքային և մարզային փուլերը: Մարզային փուլի 560 մասնակցից հանրապետական փուլին երաշխավորվել և մասնակցել է 103 աշակերտ:
   - «Ընթերցման հանրապետական օլիմպիադա-2019» ստուգատեսի մարզային փուլում հաղթող ճանաչված 3 աշակերտները մասնակցել են հանրապետական եզրափակիչ փուլին, որտեղ Արմավիրի N5 հիմնական դպրոցի աշակերտը զբաղեցրել է երկրորդ տեղը:
5. Կազմակերպվել են մարզի հանրակրթական դպրոցներում պետական, ազգային ու այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումներ, այդ թվում՝ մայրենի լեզվի միջազգային օրվան, Հայոց ցեղասպանության հիշատակի օրվան, Սարդարապատի և առաջին հանրապետության տոնին, Քաղաքացու օրվան և այլ տոներին նվիրված:
6. Աջակցություն է ցուցաբերել հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների թվով 19 մրցույթների կազմակերպմանը՝ համապատասխան ՀՀ կառավարության 04.03.2010թ. N 319-Ն որոշման:
7. Համակարգվել են մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների խորհուրդների անվանական կազմերի տվյալների հավաքագրման և ամփոփում աշխատանքները:
8. Կազմակերպվել է «Հայաստանի ստեղծարար ուսուցիչ» հանրապետական մրցույթի մարզային փուլը, որի արդյունքում հաղթող է ճանաչվել 2 ուսուցիչ:
9. Համակարգվել է մարզի դպրոցներ ընդունված թվով 230, այլ մարզերի դպրոցներ տեղափոխված և ՀՀ-ից մեկնած թվով 244 աշակերտների շարժի հաշվառումը:
10. Կազմակերպվել է 2019թ. մայիսի 7-8-ը ՀՀ ՊՆ Արմավիր քաղաքում տեղակայված զորամասում մարզի դպրոցների 11-րդ դասարանի սովորողների շրջանում ռազմադաշտային պարապմունքների անցակացումը, որին մասնակցել է 1184 աշակերտ:
11. ՀՀ ՏԿԵՆ է ներկայացվել մարզի հանրակրթական դպրոցներում սովորող ազգային փոքրամասնությունների մասին պահանջվող տեղեկատվությունը:

12. Մարզի թվով 17 հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվել են փաստաթղթերի և գույքի հանձնման-ընդունման աշխատանքներ:
13. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և համայնքի համաֆինանսավորմամբ Ալաշկերտ համայնքում կառուցվել է մանկապարտեզ, որը հունիսի 1-ին բացել է իր դռները՝ 90 երեխաների համար:
14. Արգավանդ համայնքում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և համայնքի համաֆինանսավորմամբ հիմնանորոգվել է Արգավանդ համայնքի մանկապարտեզը, բարերարների աջակցությամբ կահավորվել է մանկապարտեզը:
15. Հնարավորություն է ընձեռնվել մարզի դպրոցականները «Դպրոցական բաժանորդային ծրագրի» շրջանակներում անվճար այցելել երեք մշակութային հաստատություն:
16. Նորակերտ համայնքի մշակույթի կենտրոնում, համագործակցելով համայնքապետարանի Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության հետ, բացվել է «Արմաթ» ինժեներական լաբորատորիա, արդյունքում՝ 10-16 տարեկան շուրջ 105 դպրոցական անվճար հիմունքներով ձեռք են բերում գիտելիքներ:
17. **Մշակույթ.** ՀՀ մշակույթի նախարարության հետ համատեղ մարզում իրականացվել կամ ընթացքի մեջ են մի շարք մշակութային ծրագրեր, այդ թվում՝ «Երաժշտական ու արվեստի դպրոցներում ազգային, լարային, փողային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի իրականացում, «Թանգարանային գիշեր» ակցիայի շրջանակներում մարզի թանգարաններ անվճար այցելություն բոլոր այցելուների համար, «Ուսումնամեթոդական և գործնական օգնություն» ծրագրի իրականացում երաժշտական և արվեստի դպրոցների մանկավարժների համար, «Երևանի և ՀՀ մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր-դպրոցներ» ծրագիր:
18. Մարզի թվով 16 երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, լարային և փողային նվագարանների բաժիններում սովորող 163 աշակերտների ուսման վարձավճարի փոխհատուցման համար նախատեսված գումարը 2019թ. համար կազմել է 38039.8 հազ. դրամ:
19. Մարզում մշակույթի և սպորտի բագավառներում պետական և մարզային միջոցառումների ծրագրերի շրջանակներում իրականացվել են համապետական և մարզային 12 միջոցառումներ (Հայոց բանակի, Քաղաքացու օրվան, Թումանյանի, Կոմիտասի 150-ամյակին նվիրված, Շուշիի հաղթանակի և Հայրենական Մեծ պատերազմում, Հանրապետության տոնին և Սարդարապատում տարած հաղթանակի օրվան նվիրված միջոցառումներ և այլն):
20. **Սպորտ.** ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ մասսայական սպորտի ոլորտում մարզում իրականացվել են մի շարք ծրագրեր, այդ թվում՝ պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության հանրապետական մրցույթի, ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի հանրակրթական դպրոցների 1-ից 3-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման, ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի հանրակրթական դպրոցների 4-7-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման, «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի, դպրոցականների շախմատի հանրապետական օլիմպիադայի՝ երեք փուլով, ՀՀ դպրոցականների շախմատի պատանիների և աղջիկների առաջնության, «ՀՀ Ազգային ժողովի գավաթի» խաղարկության՝ երեք փուլով, ՀՀ հանրակրթական դպրոցների սովորողների հանրապետական 4-րդ ուսումնամարզական խաղերի անցկացում:
21. Մարզպետի պատվոգրերի և շնորհակալագրերի են արժանացել մարզից վերջին շրջանում միջազգային ասպարեզում հաջողություններ գրանցած 8 մարզիկները և 1 շախմատային թիմ:

Առողջապահության բնագավառ

1. Մարզի բժշկական հաստատություններում բարձրացվել են արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող աշխատակիցների վարձատրության չափը, փոփոխվել են վարչական աշխատակազմի պաշտոնային դրույքաչափերը: Վճարովի ծառայություն մատուցող բոլոր բժիշկները կատարված վճարովի ծառայություններից ստացված ֆոնդից ստանում են հավելավճար: Արդյունքում, շուրջ 20-30%-ով ավելացել են բուժանձնակազմի աշխատավարձերը:
2. Ձեռնարկվել է կազմակերպչական և վարչական միջոցներ ստվերային դրամաշրջանառության բացառման նպատակով, ինչի արդյունքում ավելացել են վճարովի ծառայություններից մուտքերը, մասնավորապես՝ 2019թ. առաջին կիսամյակում մարզի բուժհաստատությունների վճարովի ծառայությունները կազմել են 262,358.9 հազ. դրամ, 2018թ. նույն ժամանակահատվածում վճարովի ծառայությունները կազմել են 202,758.5 հազ. դրամ կամ ավելացել է 59600.4 հազ. դրամով:

3. Կենտրոնական գնմամբ և մարդասիրական ճանապարհով տարբեր հիվանդությունների բուժման նպատակով ստացվել և մարզի բուժհաստատություններին է բաշխվել 73.240.614 հազ. դրամ արժողությամբ տարբեր դեղամիջոցներ, ինչպես նաև ստացվել են բժշկական տարբեր սարք-սարքավորումներ, մարզի բժշկական հաստատություններին հատկացվել են 9 նոր շտապօգնության մեքենաներ, որից 2-ը՝ ռեանիմոբիլ:
4. Էջմիածնի բժշկական կենտրոնում տնտեսված միջոցների հաշվին իրականացվել է ծննդատան մասնաշենքի երկրորդ հարկի ամբողջական վերակառուցում և վերազինում, ստեղծվել է նոր ծնարան և վիրահատական սրահ, ամբողջությամբ վերանորոգվել են պալատները, ինչը կնպաստի ծննդկանների դեպի Երևան շարժի նվազեցմանը:
5. Բարեգործական միջոցներով ամբողջությամբ վերակառուցվել է Վաղարշապատի հիվանդանոցի ընդունարանը, ձեռք են բերվել նոր բժշկական սարքավորումներ, որպես նվիրատվություն ստացվել է 1 շտապօգնության մեքենա: Արմավիրի բժշկական կենտրոնում բարեգործական միջոցներով ստացվել է 1 հեմոդիալիզի և նոր ջրի թորման սարք:
6. Պարբերաբար իրականացվում են բժիշկներ և բուժքույրերի վերապատրաստման աշխատանքներ և արդյունքում տրամադրվում են ՇՄՋ կրեդիտներ:
7. Մարզում գործող ուղեգրող հանձնաժողովի կողմից մարզին հատկացված քվոտաների քանակին համապատասխան տրամադրվել են 103 անվճար ուղեգրեր համապատասխան կարգավիճակ ունեցող ազգաբնակչությանը, ինչպես նաև առաջին կիսամյակում «Վանաձոր ԱՍԱՐ առողջարան» առողջարանային վերականգնողական բուժման համար տրամադրվել է 10 ուղեգիր:
8. Մարզպետարանի ենթակայության առողջապահական հիմնարկներն աշխատավարձի պարտք չունեն:
9. Արմավիրի և Վաղարշապատի պոլիկլինիկաների կողմից հետազոտության նպատակով Երևան են ուղարկվել 1543 զորակոչիկներ, վճարվել է 1,040,900 ՀՀ դրամ ճանապարհածախս:
10. Ձեռնարկվել են միջոցներ մարզպետարանի ենթակայությամբ գործող բուժհաստատություններում անխափան էլեկտրամատակարման կազմակերպման ուղղությամբ:

Սոցիալական ապահովության բնագավառ

1. 2019թ. առաջին կիսամյակի ընթացքում կազմակերպվել և իրականացվել են մարզի երեք ՍԱՏԳ-ներում ընտանիքների անապահովության գնահատման համակարգով հաշվառված ընտանիքների փաստագրման աշխատանքները: 2019թ. հուլիսի 1-ի դրությամբ փաստագրված ընտանիքների թիվը 6759 է, որոնցից նպաստառու են 4536-ը: Սոցիալական նպաստ է ստանում 1172 և հրատապ դրամական օգնություն է ստացել 639 ընտանիք: Ավանդի փոխհատուցման գումար է ստացել 149 ընտանիք:
2. «Մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի այլ նպաստներ բյուջեից» հոդվածով 2019թ. առաջին կիսամյակի ընթացքում դրամական օգնություն է հատկացվել սոցիալապես անապահով 425 ընտանիքների՝ 12850.0 հազ. դրամ գումարի չափով:
3. Մարզի զբաղվածության տարածքային գործակալություններում հաշվառված են աշխատանք փնտրող 8048 մարդ, որոնցից գործազուրկի կարգավիճակ են ստացել 5980-ը: Գործակալություններում հաշվառված աշխատանք փնտրող անձանցից աշխատանքի է տեղավորվել 434 մարդ:
4. Համաձայն ՀՀ կառավարության որոշման՝ մարզպետարանում հաշվառված է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող Արցախյան պատերազմում զոհված 33 և հաշմանդամ դարձած 104 զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիք: Նույն որոշման համաձայն, փետրվար ամսին զոհված երկու զինծառայողների ընտանիքների բնակարանային գործերը՝ բնակարանի գնման վկայագիր տրամադրելու հարցը քննարկելու համար ներկայացվել է ՀՀ պաշտպանության նախարարություն:
5. Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել մարզի 7 սահմանամերձ համայնքների մինչև 3հա գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր հանդիսացող 232 հողօգտագործողների ցուցակը, որոնց ընտանիքի անդամներն ընդգրկված չեն գյուղատնտեսության ոլորտում վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմամբ իրականացվող պետական աջակցության ծրագրերում:
6. Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման ծրագրով Լեռնագոգ համայնքում իրականացվել է ներհամայնքային (1600x6) ճանապարհների խճապատման և հողով փոսալցման, Երվանդաշատ համայնքում՝ մշակույթի տան մասնակի վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքներ:

Ծրագրերին մասնակցել են Լեռնագոգում 15, իսկ Երվանդաշատում 10 գործազուրկներ: Նախատեսվում է Արմավիր քաղաքում նշված ծրագրի շրջանակներում իրականացնել թիվ 9 մանկապարտեզի շենքի մասնակի վերանորոգման աշխատանքներ, որի արդյունքում կստեղծվի 5 ժամանակավոր աշխատատեղ: Ընդհանուր ստեղծվել է 30 ժամանակավոր աշխատատեղ:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառ

1. Կազմակերպվել և իրականացվել են աշխատանքներ ընտանեկան բռնության 29 դեպքերի վարման, հաշվառման և հետագա մասնագիտական շարունակական աշխատանքի և միջգերատեսչական համագործակցության ապահովման ուղղությամբ:
2. Իրականացվել է մոնիտորինգ մարզի 26 հանրակրթական դպրոցներում՝ հատուկ ուշադրություն հրավիրելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների խնդիրներին:
3. Կազմակերպվել է թվով 170 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրումը և ապահովել եմ ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում՝ իրենց կարիքներին համապատասխան կրթական ծրագրերում երեխաների ընդգրկվելը:
4. Պարտադիր ուսուցումից դուրս մնացած 19 աշակերտների մասին ստացված տեղեկությունների հիման վրա ձեռնարկվել են միջոցներ՝ նրանց դպրոցներ ինտեգրելու ուղղությամբ:
5. ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչությունից ստացված հաշվառման մեջ գտնվող և փաստացիորեն հայտնի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործության կատարման մեջ մեղադրվող, անչափահաս երեխաների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա իրականացվել են աշխատանքներ, որի արդյունքում 7 անչափահաս դուրս է եկել հաշվառումից, 9-ի նկատմամբ նշանակվել են հասարակական դաստիարակներ:
6. Սկզբնական հաշվառման վերցված առանց ծնողական խնամքի մնացած թվով 5 երեխաների անձնական գործերը ներկայացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:
7. ՀՀ տարածքում բնակվող ՀՀ 2 քաղաքացիներ հաշվառվել են որպես որդեգրել ցանկացող անձինք և ներկայացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման:
8. Խնամատար ընտանիքում տեղավորված 2 երեխաների ընտանիքների նկատմամբ մշտադիտարկման իրականացման աշխատանքները և նրանց հետ կնքված պայմանագրերը երկարացվել են:
9. Մասնագիտացված մանկատուն են տեղավորվել թվով 3 երեխա, հետևողական աշխատանքի արդյունքում ընտանիք են վերադարձել թվով 4 երեխա:
10. Հաշվետու ժամանակահատվածում 7-13 տարեկան 80 երեխա անցկացրել է 20-օրյա հանգիստ Հանքավանի «Հասմիկ» մանկական ճամբարում:

Տեղական ինքնակառավարման, համայնքային ծառայության և ՀԳՄՏՍ գործունեությանն առնչվող հարցեր

1. Մարզի ՏԻՄ-երին տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն իրենց սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման հարցերով, ինչպես նաև վերահսկվել է պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների կատարման ընթացքը և պարտադիր լիազորությունների կատարումը:
2. Հսկողություն է իրականացվել մարզի համայնքների ավագանու նիստերի հրավիրման պարբերականության, ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտերը սահմանված կարգով մարզպետարան ներկայացնելու նկատմամբ և դրանց համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին, ինչպես նաև համայնքներում ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների դիմում-բողոքներին, առաջարկություններին, ընդունելություններին և նրանց կողմից բարձրացրած հարցերին օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք տալու աշխատանքների նկատմամբ:
3. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 21.12.2018թ. N 364-Ա հրամանով սահմանված ժամանակացույցի՝ մարզի 20 համայնքներում իրականացվել են իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքներ:
4. Հսկողություն է իրականացվել համայնքապետարաններում կադրային գործի վարման, համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթների աշխատանքների, ինչպես նաև համայնքային ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային

ունակությունների հետևողական կատարելագործման, համայնքային ծառայողների ատեստավորման աշխատանքների ուղղությամբ:

5. Մարզի ՏԻՄ-երի կողմից ընդունված և սահմանված կարգով մարզպետարան առաքված իրավական ակտերի ուսումնասիրությամբ արձանագրված թվով 34 խախտումների վերաբերյալ առարկություններ են ներկայացվել համապատասխան մարմիներին:
6. Մարզի համայնքների խոշորացման ծրագրի իրականացման շրջանակներում կազմակերպվել և ներկայումս քննարկման փուլում են գտնվում համայնքների միավորման վերաբերյալ համապատասխան ՏԻՄ-երի և բնակչության իրազեկվածությունը իրականացվելիք գործընթացի մասին:
7. Մարզի թվով 26 համայնքների ղեկավարների կողմից համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար տրվել է 61 հայտարարություն, մրցույթներին մասնակցել են 139 քաղաքացի, հաղթող են ճանաչվել 48-ը, որոնք նշանակվել են համապատասխան պաշտոններում:
8. Մարզպետարանում կազմակերպվել և անցկացվել են թվով 40 համայնքային ծառայողների վերապատրաստումներ, համայնքներում կայացել են համայնքային ծառայության պաշտոներ զբաղեցնող համայնքային ծառայողների թվով 12 ատեստավորումներ:
9. Մարզպետի համապատասխան որոշումներով 11 համայնքում նշանակվել և անցկացվել են հերթական և արտահերթ ընտրություններ, որից 9-ում՝ համայնքի ղեկավարի, 2-ում՝ համայնքի ավագանու:
10. Մարզպետի համապատասխան որոշմամբ հաստատվել է «ՀՀ Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման հիմնական միջոցառումների պլանը»:
11. Ապահովվել է մասնակցությունը 11.04.2019թ. կազմակերպված «ՀԱԷԿ-ի միջուկային կամ ճառագայթային վթարի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով հրամանատարաշտաբային ուսումնավարժությանը:
12. Մարզային զինկոմիսարիատի հետ համագործակցված և փոխհամաձայնեցված արդյունավետ աշխատանքի արդյունքում ապահովվել է զորակոչային պլան-առաջադրանքի 100%-ով կատարումը:
13. Մարզի թվով 17 քաղաքացիներից ստացվել են դիմումներ ՌԴ մուտքի թույլտվության արգելքը վերացնելու վերաբերյալ, որոնք ուղարկվել են ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայություն, իսկ ստացված պատասխանների և պարզաբանումների մասին տեղեկացվել են դիմումատու քաղաքացիները:
14. Մարզպետարան-համայնք-մասնավոր համագործակցության արդյունքում արցախյան ազատամարտի 50 մասնակիցներ մեկ շաբաթով անցկացրել են իրենց հանգիստը Վրաստանի Քոբուլեթի քաղաքում:

Զորահավաքային նախապատրաստությանն առնչվող հարցեր

1. Կազմակերպվել են մարզի և մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության ու քաղաքացիական պաշտպանության, մարզի համայնքների և զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության տարահանման և այլ պլանների մշակման և ճշգրտման աշխատանքներ, կազմակերպվել են թվով 2 ուսումնական մարզումներ, Արմավիրի ՄՓՎ-ի կողմից անցկացված դասընթացներ: Ապահովվել է մարզի զինվորական կոմիսարիատի զորահավաքային նախապատրաստության և զորահավաքային ռեսուրսների կազմակերպման, ինչպես նաև ՏԻՄ-երի միջոցով ծանուցման և ազդարարման տեղամասերում ծանուցողների և ազդարարողների հավաքագրման և կազմակերպման գործընթացը:

Ներքին աուդիտին առնչվող հարցեր

1. Գնահատվել է աուդիտի ենթարկվող թվով 30 օբյեկտների կողմից իրականացվող ֆինանսական բնույթի գործառույթների համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին:
2. Հաշվապահական հաշվառման գրանցումների մեջ ապահովվել է թվով 13 անհամապատասխանությունների բացահայտումը և ճշգրտումը:
3. Գնահատվել է աուդիտի ենթարկվող օբյեկտների կողմից տրամադրվող ֆինանսական բնույթի տեղեկատվության արժանահավատությունն ու ճշտությունը:
4. Ներքին աուդիտի 2019թ. տարեկան և ռազմավարական ծրագրին համապատասխան թվով 30 պետական ոչ առևտրային կազմակերպություններում իրականացվել է ֆինանսական աուդիտ, որոնց արդյունքների մասին կազմվել են աուդիտորական հաշվետվություններ և եզրակացություններ:

Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության, վերլուծության բնագավառ

1. Մշակվել և ներկայացվել է ՀՀ Արմավիրի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության իրականացման մարզի 2019թ. գործունեության ծրագրի նախագիծը, որը հաստատվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 26.04.2019թ. N 12-Լ հրամանով:
2. Կազմվել և ներկայացվել է 2018 թվականի գործունեության ծրագրի իրականացման տարեկան մոնիտորինգի հաշվետվությունը:
3. ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ սահմանված ժամկետում 40 համայնքից ստացվել է 45 հայտ, ՀՀ ՏԿԵՆ է ներկայացվել 37 ամբողջական փաթեթ, որից միջգերատեսչական հանձնաժողովի 5 նիստերի ընթացքում հավանության է արժանացել 31, մերժվել՝ 1 ծրագիր, առաջիկա նիստերի ընթացքում կքննարկվի ևս 5 ծրագիր:
4. Ապահովվել է մարզի 97 համայնքների 2018թ. տարեկան վարչական տվյալների շտեմարանների ներկայացումը պահանջվող ձևաչափով: Ներկայումս աջակցություն է ցուցաբերվում համայնքային պատասխանատուներին՝ նոր էլեկտրոնային տեղեկատվական համակարգում համայնքների վարչական տվյալների մուտքագրման ուղղությամբ:
5. 2019թ. ընթացքում նախատեսվում է մարզում անցկացնել «Իմ քայլը հանուն Արմավիրի մարզի» ներդրումային համաժողովը: Աշխատանքներ են տարվում ներդրումային ծրագրերի հավաքագրման, ընտրության, ծրագրերի շնորհանդեսների պատրաստման ուղղությամբ: Գործընթացը շարունակական է, համաժողովի անցկացման ժամկետի հստակեցման դեպքում կազմակերպչական աշխատանքները կվերսկսվեն: ՀՀ տարածքների համաչափ զարգացմանն ուղղված ներդրումային հարթակում տեղադրելու նպատակով ներկայացվել է 8 ներդրումային ծրագիր-առաջարկ, աշխատանքները շարունակական են:
6. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն՝ վերջին երկու տարիներին մարզում միջազգային դոնոր կազմակերպությունների օժանդակությամբ և մասնակցությամբ իրականացված զբոսաշրջության զարգացմանն ուղղված, առաջիկայում նախատեսվող և իրականացվելիք, մշակված/մշակվող ծրագրերի վերաբերյալ: Ներկայացվել է նաև տեղեկատվություն մարզում գործող հյուրանոցային տնտեսության օբյեկտների և 2018թ. ընթացքում կատարված զբոսաշրջային այցելությունների թվի վերաբերյալ:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բնագավառ

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովվել է մարզպետարանի տեղեկատվական քաղաքականության կազմակերպումը և իրականացումը: Մարզպետարանի պաշտոնական կայքում, մարզպետարանի և մարզպետի ֆեյսբուքյան էջերում հրապարակվել է թվով 256 մամլո հաղորդագրություն, 428 քաղաքացիական, համայնքային ծառայության, մարզպետարանի ենթակայու-թյամբ գործող ՊՈԱԿ-ներում առկա թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթների և այլ բնույթի հայտարարություններ, ինչպես նաև տարբեր ոլորտներ ներկայացնող 189 տեղեկանք: Կազմակերպվել և իրականացվել է ավելի քան 53 հարցազրույց: Մարզպետարանի կայքում հրապարակվել է մարզպետի կողմից ընդունված 210 որոշում և արձակված 94 կարգադրություն: Իրականացվել է ամենօրյա ԶԼՄ մոնիտորինգ և պատասխանվել 235 ֆեյսբուքյան նամակի:
2. Մարզպետարանի պաշտոնական կայքի միջոցով ապահովվել է նաև մարզի համայնքների ավագանու 370, ղեկավարի՝ 322 որոշման և համայնքային բյուջետային եկամուտների ամսական, ծախսերի եռամսյակային տվյալների, համայնքների 2019 թ. բյուջեների, զարգացման ծրագրերի և տարեկան աշխատանքային պլանների, համայնքներում իրականացված վարչական հսկողության արձանագրությունների և այլ բնույթի փաստաթղթերի հրապարակումը: Աջակցություն է ցուցաբերվել համայնքապետարանում Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) շահագործման և «Mulberry-2» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջև փոխգործակցության ապահովման, ինչպես նաև համայնքապետարաններում պաշտոնական կայքերի ներդրման և վարման աշխատանքներին: